

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ

Հոկտեմբերի 15-ին Սրբոց աւետարանչացն Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասոս և Յովաննոս տօնին Ամեն. Տ. Տեղադաշի տնօրէնութեամբ Մայր առճարում հանդիսաւոր Ս. պատարագից յետոյ հանդատեան պաշտօն կատարուեց Հանգ. Տ. Մատթէոս Բ. կաթուղիկոսի յիշատակին, նրա զեքեղմանի վերայ նորին Սրբութեան անուանակոչութեան առիթով:

Սեպտեմբերի 26 և 27-ին Մայր Աթոռումս հիւր էին Վիկոնտ և Վիկոնտէս Լօրդ և Լէդի Ֆօլմառտ իրանց օրդու հետ, որ Սրբօղի համալսարանի ուսանող է:

Յարգելի հիւրերը իջեանեցին և հիւրասիրուեցին Մայր Աթոռիս նոր Մատենադարանում, ներկայացան Տեղադաշ Տ. Գէորգ Արքեպիսկոպոսին, և ընդունեցին նորին Բարձր Սրբադնութեան այցելութիւնը: Այցելեցին ու տեսան Մայր Աթոռի և շրջակայքի ուշադրութեան արժանի հնութիւններն ու հաստատութիւնները և դո՛հ սրտով մեկնեցին:

ՄԻԱՅԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ՀԱՅՈՑ Կ. ՊՕԼՍՈՅ.

Վարժարանի, դպրոցական տարեշում 1910-1911.

ՄԻԱՅԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ունին.

Վարժարան (*)

Մանչերու

հատ 72

Աղջկանց

13

Գումար

85

Այս վարժարաններէն 2 -ը բացուած են Եգիպտոսի Հ. Բ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ հաշուոյն ու անուանովը և կը կառավարուին ՄԻԱՅԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՅ մատակարարութեամբը:

(*) Ընկերութիւնը այս վարժարաններէն զատ երկամսեայ շրջանով երկու Ամառն. Վարժապետանոցներ ալ ունի՝ մին Կարնայ Շրջանակին և միւսը Կիլիկիոյ մէջ, ուր մանկավարժական ու զիւղատնտեսական դասախօսութիւններ տեղի կունենան կարող մասնագէտներու միջոցաւ՝ ուսուցչական խումբին պատրաստութեանը համար:

Պատճոհեալ

Տեւուչ	2
Օգն. Տեւուչ	1
Ուսուցիչ և Ուսուցչուհի	192
Տնտես	58
Գումար	<u>253</u>

Աւակներ

Մանչ	5605
Աղջիկ	1208
Գումար	<u>6813</u>

Տ Ա Ր Ե Կ Ա Ն Ծ Ա Խ Ք

Կարնոյ, Քղիի ու Բալուի երջանակ

Տեւուչութիւն	Օ. Ո. 342.—
Վարժարանք	» 1894.—
	<u>2236.—</u>

Տարօնի երջանակ	Օ. Ո. 400.—
Սղերդի երջանակ	» 361.25
Տիգրանակերտի երջանակ	» 190.50

Կիլիկիոյ երջանակ	
Տեւուչութիւն	Օ. Ո. 270.—
Վարժարանք	» 1150.75
	<u>» 1420.75</u>
Գումար	<u>» 4508.50</u>

Գ Ր Ե Ն Ա Կ Ա Ն Օ Ժ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

ՄԻԱՑԵԱԼ, ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ այս ծախքէն դուրս տարեկան 800:00 մ. թուանոյ դումար մ'ալ կը ծախսեն թէ՛ իրենց և թէ՛ ուրիշ դաւառական ազգային վարժարաններու աղքատիկ աշակերտաց դիրք ու դասական պիտոյք բաշխելու համար ձրիապէս:

Պարոն Սիմէօն Առաքելեան և տիկին Նադեժդա Առաքելեանները նուիրել են Մայր տաճարին երկու մետաղեայ վառարաններ, որի համար խոստարարապէս Տ. Ղևոնդ եպիսկոպոսը յայտնում է իւր շնորհակալութիւնն ու օրհնութիւնը:

Հոկտեմբեր 17-ին այցելեց Մայր Աթոռ Սրբազան Սինոդի Կառավարչատեղի Խորհրդի անդամ Տաշնի Սովետնիկ Պրախով:

Հոկտեմբերի 16—17 ուխտի եկած լինելով Մայր Աթոռ Սրբազան Սինոդի Կառավարչատեղի Խորհրդի, Մայր Տաճարի որմերից, Հանդիսարանի կաթոլիկոսի, պոկոտած սլաակերները շրջանակի մէջ առնելու համար նուիրեց 500 ռուբլի:



ՍՏԵՓԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂԱԶԱՏԵԱՆ

Կառւոյ անապատի վանահայրը, տարւոյս սեպտեմբերի 19 ին վախճանուեց 59 տարեկան հասակում: Հանգուցեալը ուսել էր Վարադաշ վանքի ժառանգաւորաց դպրոցում, ձեռնադրուել է վարդապետ՝ 1876 թուին, եպիսկոպոս՝ 1910 թուին սեպտեմբերի 19-ին:

Հանգուցեալը իւր քաղցր ընտանիքեամբ և շինարար յատկութեամբ վայելում էր ընդհանուր յարգանք և սէր մանաւանդ իւր խնամքին յանձնուած միաբանութեան մէջ:

Տէր լուսաւորէ հանգուցելոյ հոգին. ամէն: